

443

2010

2002

513(07)
9-51

Ս. ԶԵԼԻՆՍԿԻ

51(07)
9-51

Ծ Ր Ա Ք Ի Ր

ՅԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԺՇՎՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆԻԻԹԵՐ ՀԱՒԱՔԵԼՈՒ.




Издательство «Труда» + типография «Труда» в Ленинграде 1899 г.

Ա Ր Տ Ա Տ Պ Ա Ն

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻԾ

1003
11687



Թ Ի Փ Լ Ի Ս

Հպարան Մ. Դ. Ռոտինյանցի ||| Типография М. Д. Ротинянца.

Голов. просп., д. № 41.

1899

16212

2-51

300
1254-26

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԻՒՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆԻԻԹԵՐ ՀԱՒԱ-
ՔԵՈՒ ՀԱՍԱՐ

Ա.

ՄԵՐԳԵՆՑ ՎԵՐԵՐԵՐԵԱԼ.

Дозволено Цензурою. Тифлисъ, 4 Февраля 1899 г.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱՔԵՐԵԱԼ:

1) Բնակութեան տեղի ֆիզիքական դրուծիւնը, տեղադրութիւնը, տեղի քարձրութիւնը ծովի մակերեւոյթից, կլիման եւ այլն:

2) Խմելու ջրի տեսակները եւ նրանց յատկութիւնները: Մաքրում են արդեօք խմելու ջուրը եւ ինչ կերպով: Բերել խմելու ջրի քիմիական քաղաղութիւնը, եթէ յայտնի է:

3) Բացատրել բնակութեան տեղի (գիւղի, քաղաքի եւ այլն) տների դասատրութիւնը մէկ-մէկու վերաբերութեամբ եւ փողոցների լայնութիւնը: Մաքրում են արդեօք փողոցներն ու հրապարակները եւ ո՞րտեղ են ժողովում կամ ի՞նչ են անում աղբը: Չորացնում են արդեօք թրիքը եւ ո՞րտեղ են պատրաստում փթիքը:

4) Եկարագրել տների ձևը, նրանց յարմարութիւնը տարուայ զանազան եղանակների համար ստողջապահական տեսակէտից:

5) Ինչպէ՞ս են ձմեռը տաքացնում քնակարանը, ի՞նչ տեսակ վառարաններ են գործ ածում (թոնիր, մանդալ, թուխարի եւ այլն):

6) Ինչպէ՞ս են օգտում վառարանների տաքութիւնից (քուրսու տակ նստելը, քնել քուրսու շորս կողմը, ոտները մոցնելով նրա տակ, մանդալի վրայ ձեռներ տաքացնելը եւ այլն):

7) Գոյութիւն ունի՞ն արւեօք օդաներ (միանայ) գուժերում, իբրեւ ձմեռուայ քնակարան: Ե՞րբ են օգտում օդաներից՝ ցերեկը թէ գիշերը:

8) Շինո՞ւմ են արտաքնոցներ եւ ի՞նչպէս են մաքրում նրանց, ի՞նչպէս են վարում արտաքնոցներ չնղած դէպքում:

9) Ի՞նչ են անում աներում հաաքուած աղբը եւ ընտանի սատկած կենդանիների դիակները:

10) Չե՞ն համարում վարակիչ այն ջուրը, որի մէջ լուանում են մեռելի դիակը, ի՞նչ են անում այդ ջուրը:

II. ՄԱԶՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵ՛ԱԼ:

11) Արդեօք գիւղերում կա՞ն բաղնիսներ, տարուայ ընթացքում քանի՞ անգամ են բաղնիս գնում:

12) Տանը լողանո՞ւմ են թէ չէ, քանի՞ անգամ տարուայ ընթացքում: Լողանո՞ւմ է կինը դաշտանից յետոյ, ամեն շաբաթ լուանում է նա իւր գլուխը եւ ոտները: Լուանո՞ւմ է աղամարդը իւր գլուխը եւ ոտները, ե՞րբ, քանի անգամ շաբաթուայ, ամսուայ, տարուայ ընթացքում:

13) Գործ են ածում սապոն, շողան (Salicornia), գիւծու, մաժուն եւ այլ դրանց նման նիւթեր լողանալու կամ լուացունելու ժամանակ:

14) Սովորութիւն կա՞յ լուանալ ներքնագգեստը, վերնագգեստը եւ անկողինը, ե՞րբ եւ քանի անգամ տարուայ մէջ:

15) Սափրո՞ւմ են գլուխները թէ չէ, ինչ նշանակութիւն են տալի գլխի սափրելուն:

16) Սափրո՞ւմ են կամ փետո՞ւմ են սեռական անդամի կողմերի մազերը: Կա՞յ ցեխ (նուրայ) դնելու սովորութիւնը, քանի՞ անգամ տարուայ ընթացքում սափրում են կամ փետում են յիշեալ մազերը, կամ ցեխ են դնում նրանց անհետացնելու համար: Ի՞նչ նշանակութիւն են տալիս այս սովորութեանը:

III. ԳԻՒՂԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

17) Ո՞վքեր են գիւղերում բժշկութեամբ պարապում (յիշել նրանց անունը եւ ազգանունը):

18) Կա՞ն արդեօք գիւղական բժիշկներից մասնագէտներ հիւանդութեան միւղերի մէջ, օր. ոսկրաբեկութեան, աչքացաւի, վիրաբուժութեան եւ այլն:

19) Կան արդեօք միզաքար հանող բժիշկներ, պարապո՞ւմ են բժիշկները եւ անդամահատութեամբ:

Ծանօթ. Ցանկալի է նկարագրել այսպիսի բժիշկների գործիքները:

20) Ո՞վ է արին առնում, գրեխ, տգրուկ, սրուակ կամ կոտոշ դնում:

21) Պարապո՞ւմ են արդեօք գիւղական սափրիչները բժշկութեան գործով եւ ի՞նչ տեսակ հիւանդութիւններ են բժշկում:

22) Կա՞ն ժողովրդի մէջ ծաղիկ կտրողներ, հաատո՞ւմ է ժողովուրդը ծաղիկ կտրելուն:

23) Ի՞նչպէս է վերաբերում ժողովուրդը դէպի ուսում ստացած բժիշկները:

24) Գործ են ածում տեղական բժիշկները ձեռագիր կամ տպած բժշկարաններ: Մանրամասն տեղեկութիւն տալ այսպիսի բժշկարանների մասին:

IV. ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵ՛ԱԼ:

25) Ցուցակագրել դեղեր պատրաստելու գործածե

նիւթերը, հանդերձ տեղական եւ գիտնական անուններով:

26) Յուցակագրել ըոյր տեղական վայրենի եւ ընտանի ըոյսերը, որոնք գործ են ածուս ղեղեր պատրաստելու համար, եւ նկարագրել նրանց ժողովելու, պահելու եւ գործածելու եղանակը:

Ծանօթ. Յանկայի է գրել ըոյսերի թէ տեղական (ժողովրդական) եւ թէ գիտնական անունները: Եթէ նիւթ ժողովողին յայտնի չէ ըոյսերի գիտնական անունները, այն ժամանակ թող նա կազմէ նրանցից ժողովածու (вербария) եւ ուղարկէ նիւթերի հետ:

27) Նկարագրել ամեն տեսակի ղեղերը պատրաստելու եղանակը:

28) Հինան, երես քսելու սնգոյրը եւ սեւ ղեղը (աչքը ղնելու համար) գեղեցկացուցի՞չ են համարուում թէ բժշկական միջոցներ:

29) Չէ՞ն համարում քաղնիսի ցեխը (նուրան) իբրև բժշկական միջոց եւ ինչ հիւանդութեան դէմ:

30) Ի՞նչ նախատակով են հինայ ղնում:

V. ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱ-
ԲԵՐԵԱԼ:

31) Յուցակագրել ամէն տեսակի հիւանդութիւնները, որոնք գոյութիւն ունին ժողովրդի մէջ, հանդերձ ժողովրդական անուններով (անհասկանալի անունները պէտք է բացատրել):

32) Բացի ընդհանուր հիւանդութիւններից կան արդեօք որոշ տեղին յատուկ հիւանդութիւններ, ի՞նչպէս է օր. Գանձակի իլեարան:

33) Նկատել մահաքնի (летария) դէպքերը:

34) Համարում են արդեօք իբրև հիւանդութիւն լուսնոտութիւնը (лунатизм), մղձաւանջը (խիպիլիկը—коч-

магъ) եւ խելագարութիւնը: Ինչո՞վ են բացատրում այս հիւանդութիւնների առաջանալը:

35) Ինչո՞վ են բժշկում՞ զանազան տեսակ հիւանդութիւնները, որոնք են՝ ախորժակի փակումն, ականջացաւը, ականջի խշռոցը, ամորձիքի ուռոյցքը, այտուռոյցքը (флюкс), այրուածքը, անգլխական ախտը, այրական անգորութիւնը, անքնութիւնը, աչքացաւը, ատամնացաւը, արգանդաէջը (отыжение матки), արգանդատապը (воспаление матки), արգանդի ծոռիլը, արինանոտութիւնը (քթից, լնդերից, կտրած տեղից, արգանդից ծննդաբերութիւնից առաջ եւ յետոյ, երեխայի պորտից եւ այլն), արին թքիլը, արեւահարութիւնը, քարակացաւը (թորախտը), քերանի ըորըրքումն, քերանի գարշահոտութիւնը, քերանի վէրքը, քիթենը (мороз), քկացաւը, ըորոտութիւնը (որոգած), գլխացաւը, գլխի ճաքոցը (վեր ընկնելուց), գլխի պտոյտը, գլխի ուռոյցը, դաշտանի դաղարումն, դաշտանի անկանոնութիւնը, ղեղնախտը (желтуха), դժուարամարսութիւնը, դողերոցքը, երիզաորդն, երեսի պզուկներն, ընկերքի ընկնելու ուշանալը, թանջը (веноза), թարախակոյտը (нарыв), թուլութիւնը, թունատրութիւնը զանազան թոյներից, թքագնացութիւնը, լուծը, լուսնոտութիւնը, լսողութեան ծանրութիւնը, խելագարութիւնը, խզուկը, խիարուկը (добокс), խիպիլիկը (մղձաւանջը), խլութիւնը, կտրուգիկը, ծաղիկը, ծծի ամբանալը, ծնընդաշրի հոտումն, ծննդատենդը, կաթնասնկախտը, կաթուածը, կայծուրիկը (чиря, сепедс), կանանց ստինքի պտուկների ճաքճիլը, կանանց սեռական անդամների ըորըրքումը, կանիճը, կապոյտ հազը (кочлюкс), կատաղած շան կծածը, կարճատեսութիւնը (близорукость), կարմրուկը, կեղցաւը (лапкрьс), կիրկիրութիւնը (խզխզալը, ճայնի կրտորուիլը), կողբացաւը, կողքի ծակոցը, կոպերի ըորըրքումն, գորտնուկը, կտրուածքը, կշետի եւ մեղուի խայթածը, կըրծացաւը, հազը, հարիւքը, հաորուխ, հեծկատանքը (զկըրտոցը), հեշտոցի իլնելը, հեւոցը, հնդկախտը, ձեռների ճաքճիլը, ձուապարկի ուռոյցքը, ճմլումն (чума), մատ-

նաշուրթը (կծիւ), միգարգելութիւնը, միգարարը, մոնիք (вешука), մրտողութիւնը (мрота), յօդացարը (ревматизмъ сѧ соуленіяхѧ), շարուագնացութիւնը ականջից, շէքի պատուիրը, շրթունքների ճարճիքը, ոսկրաքեղումն, ոսկրախախտումն, ոտների քրանումն, ործկալը, ործելուծը (холодея), որքիւնը, ուշագնացութիւնը, ուոյցքը (բի, ականջի, այտի, ոտի, ծնկան եւ այլն), ջրգողութիւնը (воданка), ջերմը, սուսանակը (труснепѧ), ստիւքների բորբոքումն, սրտատրոփը (сердцебиеніе), սրտախանութիւնը, վաւաշախտը (сифилісѧ), վերջնաղիքի դուրս գալը, վէրքը (գնդակի, սրի, ծակելուց, անասունի կծած եւ այլն), տակը միգելը, տիկնակծիկը (կլգարուկ — шумелѧ на веждѧ), ցընցումները (судорогу), ցրտի տարածը, փայծաղի աճումն, փորացարը, փորկապութիւնը, փսխումն, քամին (ոսկրի, մկանունքի եւ այլն — ревматизмѧ), քոսը, քութեշը, օձի կծածը եւ այլն եւ այլն:

36) Ի՞նչ միջոցներ են գործ դնում, որ ամուլ կանայք երեխայ ծնեն:

37) Ի՞նչ բժշկական կամ մեքենայական միջոցների է դիմում կինը իւր արգանդի պտուղը ոչնչացնելու համար:

38) Ի՞նչ միջոցների են դիմում կանանց կաթը անլացնելու համար:

39) Ի՞նչ են անում ցայլըջիլը ոչնչացնելու համար:

40) Ի՞նչ միջոց են գործ ածում գլխի ոջիլի եւ անիծի դէմ:

41) Ի՞նչ հասկացողութիւն ունի ժողովուրդը պահնցողութեան մասին (оіепа):

42) Ի՞նչ տեսակ կերակրներ, պտուղներ եւ այլն հիւանդի համար լաւ կամ վատ են համարում:

43) Գործ են ածում արդեօ՞ք որեւ իցէ միջոց արթնցողութեան դէմ:

44) Կա՞յ ափիոն ընդունելու սովորութիւն:

45) Գիտէ արդե՞օք ժողովուրդը, որ կան վարակիչ հիւանդութիւններ եւ կարելի է հիւանդից վարակուիլ:

46) Ի՞նչ միջոցներ են գործ դնում վարակիչ հիւանդութիւնների դէմ վարակուելուց խոյս տալու համար:

47) Ի՞նչ միջոցների են դիմում օրիորդները իրենց մազերը աճեցնելու համար: Ի՞նչ միջոցներ են գործ ածում մազերը թափելու դէմ:

48) Ո՞ր տեսակ հիւանդութեան ժամանակ հիւանդի մազերը կտրում են կամ նրա գլուխը սափրում:

VI. ՆԱԽԱՊԱՇՏԱՐՄՈՒՆԲՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՆԱԼ:

49) Ինչո՞վ են բացատրում հիւանդութեան առաջանալը եւ նրա գլխատը պատճառը: Ի՞նչ զբաղմունքից ինչ հիւանդութիւն է առաջանում:

50) Չե՞ն համարում որոշ հիւանդութիւնները իբրեւ կենդանի էակներ, ի՞նչ նմանութիւն են տալի ամէն մէկին եւ ո՞րտեղ են նրանք ընտանում:

51) Ո՞ր սրբերն կամ շար ոգիներն ուղարկում են ժողովրդի մէջ հիւանդութիւն, ի՞նչ պէտք է անել, որ սրբերը կամ ոգիները հիւանդութիւն չտարածեն ժողովրդի մէջ, ի՞նչ միջոցների պէտք է դիմել չհիւանդանալու համար:

52) Ի՞նչ պէտք է անել, որ կայծակը չտայ մարդուն:

53) Ի՞նչ նշանակութիւն են տալի մակատագրին հիւանդութեան դէպքում:

54) Ինչո՞վ են բացատրում տարափոխիկ հիւանդութեան երեւան գալը, ո՞րտեղից է գոյանում տարափոխիկ հիւանդութիւնը, ազդո՞ւմ են նրանց երեւան գալուն գիսաւոր աստղերը, ծիածանը եւ ուրիշ դրանց նման երևույթները:

55) Ո՞ր սուրբը կամ հրեշտակը, ոգին ինչ հիւանդութիւն է ուղարկում ժողովրդի մէջ, ինչ պատճառով սրբերը, հրեշտակները եւ ոգիները հիւանդութիւն են ուղարկում:

56) Ի՞նչ են անում հիւանդութիւն պատճառող սրբերին, հրեշտակներին, ոգիներին մեղմացնելու համար, որ նրանք հիւանդութիւն չուղարկեն ժողովրդի մէջ կամ դադարեցնեն երեւան եկած հիւանդութիւնը:

57) Ի՞նչ ծէսեր են կատարում հիանդութիւն պատճառող սրբի կամ հրեշտակի անունն իմանալու համար:

58) Ի՞նչ ծէսեր են կատարում շարերից պահպանելու համար, որ նրանք հիանդութիւն չպատճառեն:

59) Ի՞նչ են անում, որ աչքով չտան (ըթիկներ անելը — թխտի վրայ գրած թլիսիմ կամ յուռութք, վրան հուլունքներ կախել եւ այլն): Ի՞նչ են անում աչքով տուածից ազատելու համար (թոնիրը խմորէ գնդակ գցելը եւ այլն):

Ծանօթ. Հաղորդել ըթիկների բովանդակութիւնը եւ հուլունքների, քարեղէնների եւ ուրիշ առարկաների վերաբերեալ, որոնք կրում են իրանց վրայ՝ աչքը տալու դէմ, չհիանդանալու համար եւ այլն, մանրամասն տեղեկութիւն:

60) Պաս կամ կիրակի չե՞ն պահում, որ երեխաները չհիանդանան, ո՞ր սրբի անունով են պահում պասը կամ կիրակին, ո՞ր օրերն է որոշած դրա համար (մկան կիրակէ, սուրբ Կարապետի պասը եւ այլն):

61) Ի՞նչ տեսակ նախապաշարմական ծէսեր են կատարում հիանդի վրան, նրան բուժելու համար (հիանդի կշռիլը, հիանդ երեխային էշի տակից անցկացնելը, խեղդում եւ անքնական կերպով մեռած մարդու գերեզմանի վրան լողանալը, նարեկ, սաղմոս կարդալը հիանդի գլխի վրան եւ այլն):

62) Ի՞նչ տեսակ նախապաշարմական գործողութիւն են կատարում միքանի տեսակ հիանդութիւններից ազատելու համար, ինչպէս են փայծաղի ամուսն, տիկնակծիկը, գորտնուկը, կարմիր քամին (քոռեռ), ծննդկանի ուշաթափութիւնը, հեծկատանքը (գլրտալը), երեխայի նիհարութիւնը, հարբուխը եւ այլն եւ այլն:

63) Արուեստական խալը չէ՞ համարում ժողովուրդը իբրեւ հիանդութեան դէմ առնող միջոց, մարմնի ո՞ր տեղի խալը ո՞ր հիանդութիւնից է պահպանում:

Ծանօթ. Ցանկալի է նկարագրել խալ շինելու ձևը եւ

ցոյց տալ մարմնի ո՞ր մասերում ինչ տեսակ խալեր են շինում:

64) Ի՞նչ նշանակութիւն են տալիս ձեռքերի եւ պարանոցի մանեակներին, ի՞նչ հիանդութիւններից նրանք պահպանում են, ո՞ր մետաղից պէտք է շինել այդպիսի մանեակները (չարչարանաց շաքարուայ ուրբաթ օրը շինած պողպատէ պարանոցի մանեակը պահպանում է մղձաւանջից եւ այլն):

65) Կայ սովորութիւն մատաղ անել տարափոխիկ հիանդութիւնների ժամանակ, ի՞նչ ծէսեր են կատարում այդ ժամանակ (թափօր անել, մատաղի արիւնով օծել մարմնի մասերը եւ այլն):

66) Ո՞ր հիանդութեան համար յատկացրած է այս կամ այն ուխտատեղին:

67) Ի՞նչ նշանակութիւն են տալիս հանքային ջրերին, չե՞ն համարում նրանց իբրեւ սուրբ ջրեր, ի՞նչ ծէսեր են կատարում նրանց մէջ լողսնալու կամ լուացուելու ժամանակ (ծունր դնել նրանց առաջ, մոմ կացնել, մատաղ անել, լողթեամբ մօտենալ նրանց եւ այլն):

68) Չկա՞ն սուրբ աղբիւրներ, որոնց ջրերը բժշկում են շերմէց, դողերոցքից եւ այլն, ինչ անուններ են տալիս այդպիսի աղբիւրներին:

Ծանօթ. Ցանկալի է ցուցակագրել քոլոր աղբիւրները եւ հանքային ջրերը, որոնք ժողովրդի կարծիքով սուրբ են եւ կարող են բժշկել այս կամ այն հիանդութիւնից:

69) Չե՞ն համարում անձրեւի ջուրը հիանդութիւն բուժող միջոց եւ ի՞նչ տեսակ հիանդութիւններից կարող է բուժել անձրեւի ջուրը: Ի՞նչ նշանակութիւն են տալի մայիս ամսուայ անձրեւի ջրին:

70) Կա՞ն սուրբ ծառեր, մացաններ, սրբազան անտառներ, որոնք բժշկում են հիանդութիւններից (Շամախու գաւառի Գիւրջեւան գիւղի մօտի սրբազան անտառը, Ծախիջեւանի գաւառի Հաջիվար գիւղի մօտի «Ծուղ-դիւսն»

ծառը եւ այլն): Ի՞նչ տեսակ հիւանդութիւններից են բժշկում այսպիսի ծառերը եւ անտառները, ի՞նչ տեսակ ծէսեր են կատարում, երբ հիւանդին բերում են այս տեսակ սրբազան ծառերի եւ մացառների մօտ (խոնկ ծխել, մոմ կայցնել, շորի կտոր կապել, մատաղ անել, ծառի շորս կողմը պտրտել եւ այլն): Ի՞նչ նշանակութիւն են տալի այդպիսի ծէսերին:

71) Կա՞ն ուրիշ տեսակ սուրբ առարկաներ, որոնք բժշկում են այս կամ այն հիւանդութիւնից (լեռներ, քարեր, ժայռեր եւ այլն), ի՞նչ տեսակ ծէսեր են կատարում նրանցից օգնութիւն հայցելու ժամանակ:

72) Կա՞ն այնպիսի ընտանիքներ, որոնց անդամները հիւանդի մօտ գնալու ժամանակ վերջինը թեթեւութիւն է գգում:

73) Կա՞ն այնպիսի մարդիկ, որոնք կարող են հիւանդի միջից դուրս հանել շարին, սատանային, դեւին. ի՞նչ տեսակ ծէսեր են կատարում այս գործողութեան ժամանակ:

74) Կա՞ն զուշակողներ թէ հիւանդը կառողջանայ կամ կը մեռնի, ո՞վքեր են զուշակողները, ինչ ծէսեր են կատարում զուշակելու ժամանակ:


75) Ի՞նչ են անում կատաղած մարդու վերաբերեալ, որ նա շուտ վախճանի (գլխի վրայ մօր ձեռքով հող մաղելը եւ այլն):

76) Ինչո՞վ են բացատրում մահաբանը (ռեմարս):

77) Ի՞նչ են անում հոգեվարքը (աօնիս) թեթեւացնելու համար (աւետարան կարդալ գլխի վրայ եւ այլն), ինչո՞վ են բացատրում հոգեվարքը:

78) Ի՞նչ նշաններով են իմանում, թէ հիւանդն արդէն վախճանել է եւ ոչ թէ ուշագնացութեան կամ մահաբանի մէջ է:

ԸՆՏՈՒՆԻ ԸՆՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԵՐԵՐԵԸԼ.



I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

1) Ցուցակագրել ընտանի անատունների տեղական անունները համեմատ նրանց սեռին եւ հասակին՝ ծիան, էշի, ջորու, ուղտի, գրաստի, գոմէշի, ոչխարի եւ այծի:

2) Եկարագրել ընտանի անատունների քնակարանը, կերակուրը (ծարակը) եւ խմելու ջրի տեսակները:

3) Ցուցակագրել ընտանի տեսակները, որոնք բուսում են զիւրի հանդում եւ արօտատեղերում, մէջ քերելով նրանց գիւնական անունները: Ո՞ր ընտանիքը վնասակար կամ օգտակար են համարում այս կամ այն տեսակ ընտանի անատունի համար:

4) Ի՞նչ ազդեցութիւն ունի ընտանի անատունի ստուշութեան վրայ նրա տեղափոխութիւնը ձմեռանոցից (ղըշլաղից) ամառանոց (եայլաղ) եւ հակառակ դէպքում:

5) Ի՞նչպէս են պահպանում քեղմատորոզ կենդանիները՝ ցուլին, յովատակին (որց ծիան), խոյին, ամեկին (որց այծին) եւ այլն:

6) Ի՞նչ միջոցների են դիմում ընտանի կենդանիներին արուեստական կերպով մերձատրելու համար:

7) Ի՞նչ խնամք եւ հոգատարութիւն են գործ դնում յղի անատունների վրայ: Ի՞նչպէս են նրանց օգնում ծննդաբերութեան ժամանակ:

8) Ի՞նչպէս են պահպանում նորածին անատուններին: Ի՞նչպէս են վարժեցնում հասակն առած եզին, ծիուն, ջորուն, էշին եւ ուղտին հեծնելու, քեղմատրելու եւ լծելու համար:

9) Ցուցակագրել ընտանի տեղական մեկանունները

(Է. Ա. Ա. Ա.), որոնցով անուանում են այս կամ այն ընտանի կենդանուն:

10) Ի՞նչ տեսակ դրոշմներով են նշանում այս կամ այն անասուններին: Ո՞վ է դրոշմ դնողը եւ ի՞նչպէս են անուանում նրան:

11) Նկարագրել դրոշմ դնելու եղանակը եւ դրոշմների ձեւերը:

Ծանօթ. Ցանկալի է ժողովել անասունների դրոշմների նկարները:

II. ՀԻՒԱՆՏԻՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ:

12) Ի՞նչ տեսակ հիւանդութիւնների են ննթարկում ընտանի անասունները: Նկարագրել հիւանդութիւնների արտաքին տեսքը, ընթացքը եւ այլն:

13) Ո՞ր տեսակ հիւանդութիւն է առաջանում ժողովրդի կարծիքով այս կամ այն քոյսից կամ ճարակից:

14) Ո՞ր հասակում եւ ի՞նչ տեսակ հիւանդութեան է ենթարկում այս կամ այն ընտանի անասունը: Ո՞ր տեսակ անասունը չի հիւանդանում այս կամ այն հիւանդութիւնով: Ո՞րը նրանցից աւելի դիմացկուն է հիւանդութեանը:

15) Ո՞ր տեսակ անասունը հեշտութեամբ է ենթարկւում ժանտախտ հիւանդութեան (սպա) եւ որը նրանցից չի հիւանդանում այս ախտով:

16) Ի՞նչպէս են անուանում անասնաբոյժերին: Ո՞վքեր են պարասլում այս բժշկութիւնով: Ո՞րտեղ եւ ո՞ւմ մօտ են սովորել նրանք այս արուեստը: Օգտու՞մ են նրանք ձեռագիր կամ տպած բժշկարաններից:

Ծանօթ. Հարկատր է մանրամասը տեղեկութիւն տալ այսպիսի բժշկարանների մասին:

17) Կա՞ն անասնաբոյժ մասնագէտներ անասունների ոսկրաբեկութեան եւ ոսկրախաղտութեան մէջ:

18) Ո՞վքեր են պարասլում անասունին ներքինացնե-

լու եւ ի՞նչ կերպով են ներքինացնում այս կամ այն անասունը:

19) Ի՞նչ դեղեր են գործ դնում անասունին այս կամ այն հիւանդութիւնից բժշկելու համար: Նկարագրել դեղերի բաղադրութիւնը եւ նրանց պատրաստելու եղանակը:

Ծանօթ. Ցանկալի է առաջ քերել նիւթերի տեղական եւ գիտնական անունները:

20) Ի՞նչ միջոցների են դիմում ներքինացած անասունի վէրքը բուժելու համար:

21) Ի՞նչ դեղեր են գործ ածում եւ ի՞նչպէս են քրժրչկում անասունին ոսկրաբեկութիւնից եւ ոսկրախախտումից:

22) Ի՞նչ բժշկական միջոցների են դիմում վարակիչ եւ համաճարակ հիւանդութիւնների ժամանակ:

23) Ի՞նչպէս են բժշկում վայրենի գազաններից վիրաւորուած անասունին: Ի՞նչ միջոցների են դիմում օձի եւ կատաղած շան կծածի դէմ: Ո՞ր անասունի վրայ օձի կծիլը չի ազդում:

III. ՆԱԽԱՊԱՇՏԱՐՄ ՈՒՆԲՆԵՐ ԸՆՏԱՆԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ:

24) Ի՞նչ հասկացողութիւն ունի ժողովուրդը այս կամ այն անասունի ծագման մասին: Ո՞րտեղից եւ ինչի՞ց է գրացել նրա կարծիքով այս կամ այն ընտանի կենդանին:

25) Կա՞ն սրբեր, հրեշտակներ, ոգիներ եւ այլն, որոնք հովանաւորում են եւ պահպանում այս կամ այն ընտանի անասունին:

26) Ո՞ր սրբավայրերում եւ ի՞նչ հիւանդութիւնից առողջանում է հիւանդացած անասունը: Ցուցակագրել այդ տեսակ սրբավայրերը:

27) Ի՞նչ տեսակ ձէւեր են կատարում, երբ հիւանդ

անասունին տանում են այն կամ այն սրբավայրը նրան
առողջացնելու համար:

28) Ուրիշ ի՞նչ տեսակ սնասաշտակաւ միջոցների են
զիմում հիւանդ անասունին բժշկելու համար:

29) Ի՞նչ տեսակ աղօթքներ, ասացումներ, թովչու-
թիւն եւ այլն գործ են զնում, որ անասունին ազատեն օձե-
րից, գազաններից, աչք տալուց եւ այլն:

30) Ի՞նչ միջոցների է զիմում տանտիկինը կովի, գո-
ւմէշի, ոչխարի եւ այծի կաթն անելացնելու համար: Կա՞ն
կաթն անելացնող սրբավայրեր եւ ի՞նչ ծէսեր են կատա-
րում այդպիսի սրբավայրերը այցելելու ժամանակ:

31) Ի՞նչ կարծիք ունի ժողովուրդը վարակիչ ախտով
հիւանդացած անասունին սպանելու վերաբերմամբ:

32) Գո՞րծ են ածում սպանած, հիւանդ կենդանու միսը:
Շքա ո՞ր մասերը ուտելու համար մաքուր կամ անմաքուր
են համարում: Կատարո՞ւմ են որեւիցէ ծէս, կամ գո՞րծ
են զնում որեւիցէ միջոց մորթած հիւանդ անասունի միսը
մաքրելու համար:



1-50 493

2013

« Ազգային գրադարան



NL0070960

